

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՄԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ՔՂՔԱԿՅՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐ Ե ՈՂՂԱԿԱՆ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

Ձեռագիրներն եւ չին գարձուիր:

Издатель. А. ИВАНОВИЧ:

# ՆՈՐ ՕՐ

## Լ Ր Ա Գ Ի Ր

### ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

|               |              |
|---------------|--------------|
| Է Գ Ի Պ Տ Ո Ս | ՎՐԵ. ՈՂՁ     |
| Գանձիկի համար | Տարեկան, 50  |
| »             | Վեցամսեայ 30 |
| Շրջակայից     | Տարեկան, 60  |
| »             | Վեցամսեայ 35 |

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

|           |       |    |
|-----------|-------|----|
| Տարեկան   | Փրանգ | 18 |
| Վեցամսեայ | »     | 10 |

ԲՈՒՍԻՈՆ ԵՒ ԿՈՎԱՍՍԻ ՀԱՄԱՐ

|           |        |   |
|-----------|--------|---|
| Տարեկան   | Րուբլի | 7 |
| Վեցամսեայ | »      | 4 |

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՆԻԿ Է

ԵՒ ԹՂՔԱՍՏԱՆԻ ՉԱՄԱՐ:

Թերթին Վարչութեանը վրայ է:

Վարչութեան Գարուդար-Ներկայացուցիչը Տիար Սմբատ Փափազեան, որ քաղաքիս հայ վաստարանաց մէջ կը փայլի իր հանրային օգտակար եւ եռանդուն գործունէութեամբ, իմբարզութեանս զրկած է հետեւեալ շահեկան յօդուածը, խոստանալով այսուհետեւ իր գրական աշխատակցութիւնն ալ, որ այնքան թանկագին է ՆՈՐ ՕՐի համար:

### ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Այն օրէն ի վեր որ Արեւելեան երկիրներն, մահմետական եւ կամ հեթանոս, հակառակ իրենանց աշխարհագրական գմայլի գիրքերուն, հոլային բարեբերութեան եւ հանքային հարստութեան, փակել ուղած են բացարձակապէս իւրեանց դռներն քաղաքակրթեալ աշխարհի եւ կամ օտար քաղաքակրթութեան շուրջն ներքե ապրին իրենց համար լուծ մը եւ անտանկի պատուհաս մը համարած են, ահա՛ այդ չարագուշակ օրէն կը սկսի ատելութիւն Արեւելքի եւ Արեւմտեան ազգաց մէջ. այդ օրէն սկսեալ Արեւելքի սոյն երկիրներն դատապարտուած են կոչուելու Եւրոպայի սպառնալի սեփականութիւնն, քաղաքակրթութեան երկրորդ սրտանն. իրողութիւն մը զոր կը հաստատեն դիւանագիտական յայտարարութիւններն զանազան ժամանակներու մէջ. բան մը որ Եւրոպա հրապարակաւ կը քարոզէ այն սկզբամբ թէ՛ Մահմետական սեէ երկրի մը մէջ, նամանաւանդ Արեւելքի իսլամ ազգաց մէջ քաղաքակրթութիւնը կարենալ տարածելու համար, հարկ է նոյա բնական երկիրներն դրուել: Արեւմտեան քաղաքականութիւնը սա համոզումը գոյացուցած է թէ՛ Մահմետական երկիր մը մինչեւ որ Եւրոպական զեկի մը ազդեցութեանը տակ չը կառավարուի, գժուար կը լինի քաղաքակրթել: Գաղղիոյ նախկին Արտաքին Գործոց նախարար Պ. Հանթօյի նշանաւոր մէկ ճառը զոր երեք ամիս առաջ Ֆրանսայի բեմի վրայէն խօսեցաւ իսլամութեան առթիւ, կը դատապարտէր զՄահմետականութիւնն իբր ռիսիկոս թշնամի ազգաց քաղաքակրթական յառաջդիմութեան. սոյն ճառն տեսակ մը Խաչակրաց արշաւանք էր որ կը մղուէր բեմին բարձունքէն ընդդէմ իսլամութեան, որո շարժը Մահմետականութեան մամուլը՝ ցարդ կը շարունակէ իւր ազմուկն:

Վերջապէս սա կը հետեցնենք թէ՛ Արեւելքի այդ երկիրներն, զոր օրինակ Թուրքիա Արեւելքի մէջ, եւ Չինաստան Մայրագոյն-Արեւելքի մէջ, ուր Մահմետական տարրն կը տիրէ, իւրեանց յետագէմ քաղաքակրթութեամբն դատապարտուած են, եւ յանցաւոր կը նկատուին

առաջի Եւրոպայի. ահա՛ ճշմարիտ յանցանքը, որու վերջերս արաբական թերթ մը հետեւեալ մեկնութիւնը առած էր, չինական հարցի առթիւ «Թէ ի՞նչ է յանցանքը Չինաստանի որով Եւրոպայի զինքը կը նեղեն»:

«Յանցաւոր է Չինաստան յայտ Եւրոպայի, որովհետեւ Արեւելեան մեծ կայսրութիւն մ'է որ կ'ուզէ պահել իւր անկախութիւնն եւ թոյլ չի տար Արեւմտեան ազգաց որ ազատ մուտք ունենան իւր երկրին մէջ:

«Յանցաւոր է Չինաստան, որովհետեւ հարուստ եւ բարեբեր հողերու կ'իջիւէ եւ թանկագին հանքերու տէր է, զորս Եւրոպա զրկուած է շահագործելէ:

«Յանցաւոր է Չինաստան, քանզի Ովկիանոսի ջուրերուն վրայ անպուզական գիրք մը կը գրուէ, ուր ունեցած նաւահանգիստներն Եւրոպայի աչքը կը շրջեն, որոնք թէպէտ եւ պատեն հոն մտնալու, բայց երկրին ներսերն երթալու կարողութեանէն զուրկ են:

«Վերջապէս յանցաւոր է Չինաստան, որովհետեւ կը մերժէ Արեւմտեան ազգաց ծրագրերն, եւ գործադրել տալ չուզեր իւր երկրին մէջ, ուր սոյն վերջիններն կը փափագին հաստատել երկաթուղոյ գիծեր, հանքային ու երկրադարձական ընկերութիւններ, հեռագիրներ կայնն» կը վերջացնէ ըսելով թէ՛ «Ահա բուն իսկ շարժառիթն որու համար Եւրոպա կը պատերազմի այսօր Չինաստանի դէմ, եւ որոյ առթիւ քրիստոնեաներ կը ջարդուին»:

Արարական թերթի սոյն խորհրդածութիւններն հեզնական կուզան եւ վաւերացնել բացորոշ կերպիւ մեր ըսածներն: Այժմ կը մընայ մեզ ակնարկել թէ Եւրոպա ի՞նչ նպատակաւ կը նուիրէ իւր անձն՝ Արեւելքի այդ ազգերու քաղաքակրթութեան գործին: Արեւոք իւր ստանձնած պաշտօնը կը կատարէ՞ յօդուտ այդ յետագէմ ազգերուն, թէ յօդուտ իւր ինչպէս յայտնի է, Ասիա որ Արեւելքի եւ Մայրագոյն-Արեւելքի ազգերու որորանն եղած է, ուր Մահմետական տարրը տիրած է ու կը տիրէ, իւր լայնածաւալ տարածութեամբն եւ 800 միլիոնի մտ բնակիչներովն, որոյ մէջ կը գրտնուին կառավարան, հեթանոսն եւ վերջապէս քրիստոնէութեան հակառակ մի տարր, կրնար սպառնալիք դառնալ Եւրոպայի համար իւր 300 միլիոն քրիստոնեաներովն, եթէ Եւրոպա սահման մը գրած չ'ըլլար իւր քաղաքակրթիչ սկզբբանց. բարբարոսներու հասանք մ'է որ պիտի խուժէր դէպի Եւրոպա, եթէ սա նախատեսած չ'ըլլար վտանգն. բնական է թէ Մահմետականութիւնն չը զլանար ձեռք կարկառելէ քրիստոնէութեան հակառակ այն ամեն տարրին որ

կը մաքառի քաղաքակրթութեան գործին դէմ. մեռերս հասած հեռագիրներ արդէն մեզ տեղեկացուցին թէ՛ Թուրքիոյ եւ այլ իսլամ երկիրներու մէջ քարոզներ կը տրուին ի նպատակ Չինացուց. ո՛չ ապաքէն միջին դարու մէջ նամանաւանդ Վերջ դարու սկիզբն երբ Մահմետականութիւնը կը սպառնար դէպ ի Սպանիա, Պոլիս եւ Իտալիա, կազմակերպուեցան ահապին բանակներ քրիստոնեայ զորապետներու հրամանատարութեանը ներքե ընդդէմ Մահմետականութեան:

Սա Խաչակրաց արշաւանքն էր որ բնդհանուր ազգաց պատմութեան նշանաւոր դէպքերէն մին կը համարուի: Այն արշաւանքն հակառակ իւր աննպատակ փախճանին, ոչ նուազ արդիւնաբեր եղաւ ընծայելով ընկերական մեծ օգուտ մէջ, քիչ շատ սփռելով քաղաքակրթութեան լոյսն Արեւելքի այդ խորերն. բայց երկու դարի չափ կեանք ունեցող այդ լոյսն զժառոգաբար նուազեցաւ, երբ նորանոր խուժուկներն եկան խլելու Ասիոյ եւ Եւրոպայի յարաբերութիւններն. ահաւասիկ մին այն գլխաւոր պատճառներէն, որ որոշած են Եւրոպան ձեռք առնուլ քաղաքակրթութեան գործն Արեւելքի մէջ. ասոր կը միանայ ուրիշ պատճառ մը որ քաղաքական ըլլալէ աւելի, ընկերական է. ինչպէս յայտնի է, մարդիկ ընկերութեան մէջ միանալու պէտք ունին. անհաստ մը իւր ամեն անձնական պիտոյքն առանձին չը կրնար հայթայթել, — միշտ ուրիշ ընկերով մը կարու է — եթէ մտունդի, հագուստի եւ բնակութեան նախնական նիւթերն իւր տրամադրութեան ներքե իսկ գտնուին, զաննք արուեստական ձեռի վերածելու, վերջապէս գործածելի վիճակի մը մէջ դնելու համար, ուրիշ օգնութեանը կը կարոտի: Ահա այս բնական պէտքն է որ մարդս ընկերական բրած է. բայց մարդիկ միայն սպրկելով չեն բուսականանար. իւրեանց մարմնաւոր ու մտաւոր կարողութեանց հաւասարակշիռ զարգացումի մը պէտքը կը զգան. այն ատեն աւելի բարձր ընկերութեան մը պէտք կ'ունենան, որ իրենց կը հայթայթէ սոյն միջոցներն. ահա քաղաքակրթութիւնն է այս, որ կը բանայ իրենց դպրոցներ ուր մարդիկ մէկ քանի տարուան մէջ կը ստանան բարձրագոյն տարրերու հոլովման եւ զանազան ժամանակներու մէջ հնարուած գիւտերն, աւանդութիւններն, հաղարարու մեծամեծներու գործերն — որկէ վերջը կը պատրաստուին կենաց մարտին. ահա քաղաքակրթութեան է սա — որ օգտակար կը լինի ոչ միայն իւր սահմանին մէջ գտնուած ազգին, այլ ընդհանուր մարդկութեան: Կարող է իւր սղնուացած մտքովն շահագործել բնութեան գաղտնիքն եւ պարզելներն. վերջապէս անուն եւ պատմութիւն մ'է նոյն ինքն. եթէ երբէք ունենայ կենաց դառնութիւններ. կրնայ սփոփուիլ իւր տարած բարոյական յաղթանակներովն:

Ուրեմն Եւրոպայ նկատելով որ Արեւելքի ազգերն զուրկ են չափազանցեալ այս պարզեանքն զորս բնութիւնը առատօրէն իւրեանց երկիրնեւրուն չուայլած է, հողեր անմշակ կը մնան, հարուստ հանքեր և դանձեր ժայռերու ներքե կը լռեն, ուր ժողովուրդը անտեղեակ է բնութեան հազարումէկ դաշտնեաց, վերջապէս բնութեան ձեռքը խաղաղիկ դարձած է, և որովհետեւ ընդհանրութեան շահը կը տրամադրէ՝ որ երկիրները մէկզմէկէ օգտուին, բերքերը փոխանակուին — զոր օրինակ Զինաստան ունի իւր թէյը որուն կարօտ է Եւրոպայ, սա ունի իւր ցորենն զոր կ'արտադրէ օտարին — ուստի միմեանց օգտակար ըլլալու ճամբայ մը զոր քաղաքակիրթ Եւրոպայ կրնայ բանալ:

Ուրիշ խնդիր թէ արդեօք Եւրոպայ սոյն քաղաքակիրթական գործն յօգուտ այդ Արեւելքի ազգերուն կը կատարէ թէ ոչ յօգուտ իւր անձնական շահերուն:

(Շարունակելի)

### ԳԱՅԻՐԷԻ ԳԱՍՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԸ

Ե Ի

#### ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Շար. նախորդ թիւէն)

Գիտենք, ճշմարտութիւնը դառն է միշտ, և դժուարամարտի. սակայն, կը նմանի ան՝ լեզուի գեղին, որ, թէ անտանելի և զօրաւոր, օգտակար ազդեցութիւն մը կրնէ հիւանդին վրայ: Ուստի, մեր մատը վէրքին վրայ դրած, ու մեր ազգային հիւանդ վարժարանին անտանելիքն ու աչքի առաջ ունենալով, սկսինք պարզել իրականութիւնն իր բոլոր մեղքութեան մէջ: Բնական է թէ մեր քննադատութեան հիմը դրած ենք ո՛չ միայն տարեկան հարցաքննութեանց առթիւ անսնուած երեւոյթներու վրայ, ինչ որ թերի է և անբաւարար, այլ աւելի դժբաղդակա՛ն դասընթացքին մէջ անսնուած ամենօրեայ խեղճութեանց, ՚ի գործադրութեան եղող անփոփոխ ուսուցման մէջնութիւն, ու, ամենէն աւելի, երկուսն աշակերտաց միջև շեշտուած ու աչքի զարնող տարբերութեան վրայ: տարբերութիւն, որ անցեալ տարուան ու, մանաւանդ այս տարուան հարցաքննութիւնները կը հաստատեն:

Մենք տեսած ենք ուսուցիչներ, Գալստեան վարժարանին մէջ, որոնք, առանց մասնագէտն ըլլալու, ստանձնած են աւանդել այն ուսուցիչներու առարկաները, որոնց մէջ զժողովուրդը չեն ունեցած և չ'ունին տարրական հմտութիւն և ո՛չ իսկ յարմարութիւն: Վկայ այս ճշմարտու-

թեան, քուսարանութեան դասը, որուն ուսուցիչը մահու չափ կ'առէ թուանշանները, և զոր ուսուցանելու աւելորդ հողն ստանձնած է միմիայն յարգած ըլլալու համար տիրող հոգաբարձութեան կամքը: Այդ դասը, ֆրանսերէն լեզուով աւանդելով՝ յաջողած է խեղճ աշակերտին ըզեզին մէջ զեռնիկը քանի մը պատրաստուած ու ամբողջ տարուան շրջանին մէջ կրկնուած խնդիրներու պաշար մը, որոնց մէջէն, եթէ, Աստուած չ'ընէ, սխալմամբ հանես մէկ հաստուած և կամ փոխես մէկ թուանշան, շէնքը կը փլի այդ մատուղ ըզեզին պարագայութեանը մէջ, ու խնդիրը կը մնայ անլուծելի. մաքինան ա՛լ չի գործեր . . .

Տեսնաք աշակերտներ, որ Աշխարհագրութեան դասին, թութակի պէս երգել սկսան աշխարհիս հինգ մասերուն ծովերն ու ցամաքները, անգլիներէնս. իսկ երբ հարցուեցաւ նոյն աշակերտին հայերէնով, միեւնոյն բանը, պայպանձող Չարաբիա մը դարձաւ, արձանի պէս կեցած՝ երկրացոյց քարտէսին առջև:

Հայերէնը՝ շատ ողորմելի դասնք. աշակերտները, որ երկու տող աշխարհաբար գրել չեն կրնար, դարբարի ազարդիւն ուսումովը մաշեցուցած են իրենց ըզեզները. քերականական վերլուծումը, որ լեզուին փիլիսոփայութիւնը կը նշանակէ, զբաղեցուցած էր ի զոր այդ աշակերտներուն անմշակ միտքը. եղած հարցումներուն, որ կը շօշափէին քերականութեան նախնական գիտելիքները, պատասխան մը կարելի չեղաւ ստանալ. տղուն մատուղ միտքը տանջուած ու խոշտանգուած էր տարիներու ընթացքին մէջ, ըմբռնելու համար անբաւարար. դուրսէն, անմշակ, անմտ, յօգի և կամ ուրիշ քերականական բառի մը սահմանը կամ իմաստը չ'ըմբռնող աշակերտէ մը՝ ի՞նչպէս պահանջել վերլուծում . . .

Կրօնի ու Ազգ. Պատմութիւնը, ինչպէս միւս առարկաները, կ'աւանդուին նահապետական գրութեամբ, փոխանակ տարուէ տարի աւարտելու ամբողջ գոտադիրք մը, համառօտէն մեկնելով դէպ ի աւելի ընդարձակը, փոխանակ Ա. տարին սովորելու Ս. Գրոց ու Ազգ. Պատմութեան մեծ գիծերը կամ դէմքերը, ու յետոյ, Բ. տարին աւելի ընդլայնելու նոյն ծանօթութիւնները, միեւնոյն և մէկ դասագիրքն է որ կը արուի աշակերտաց ու կը պահանջուի որ, օրինակի համար, Ա. տարին՝ Հայկազանցը, Բ. տարին՝ Արշակունեանցը, և այսպէս յաջորդաբար սովորին անոնք Ազգային Պատմութիւնը, մինչև որ աւարտեն, ինչ որ կարելի չէ, երբ աչքի առաջ ունինք ուսումնասիրութեան կարճատեւ ժամանակամիջոցը,

զոր կ'անցընէ հայ տղան մ'ըր Ազգ. վարժարանի մէջ: Ու այդ դասերը, դժբա՛ղդ մէջնոտ, իրրեւ աւելորդ տարր նկատուած են, առաջին և կարեւոր անցը շնորհուելով օտար լեզուներուն, որոնք սակայն չեն աւանդուիր գործնական ու դիւրուսոյց մէջնոտով:

(Շարունակելի)

### ՍՐԲԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Տունն՝ ուր, խաչեր գաղաթին, կը բարձրանայ Գողգոթան, Ուր Յորդանան կը հոսի, Գեթսեմանին կը բուրէ, Ուր կը թռչտի անդադար Ազաւնին Սուրբ Վերնատան, Դրախտի սիւզեր յարուցած թեւերով լոյս-փետուրէ՛ Զէ՛, նման իսկ չէ այն տան ուրտեղ մտրակն Անմեղին, Շառաչից սուր ու հարթից հոն երկնի խորտ բորտ ուղին:

Մեծամիտներ՝ առջևնին շար պնակներ, զանձանակ, Ընկողմանած տաճարէն զուրս, սեմին քով սրբազօ՛ժ՝ Կրցածն արկող երկիւղածն գաղտ կ'ընեն ծաղր ու ծանակ, Փարիսեցի կը պատուեն արտաքուստ հեղ, ներքուստ օձ, Ասոր տող մը կը շառչեն անտղտներով գիրազանց, Անյիշատակ կը թողուն միւսը, հուսկ առած զանց:

Վառ խորանին վրայ գահ բազմած է ին յայտ հանդէպ, Չափ չկայ կոշտ կեցուածքի, նստուածքի անակնած, Ազօթքի ժամ չէ երբէք, այլ ժամ զուարճ, բարեգէպ, Ահնարկներու տարիմաստ լարչանքով ապակ'նած, Փսիսուքի մեղսալից, բանբասանքի անվերջ ժա՛ւ, Կացի, նստի հարցումի, ծիծաղներու տարածում:

Սրբարանէն Սրբութիւնն չ'ժամանած դեռ Սեղան, Պնակակիր, յոխորտուն մարդիկ թափօր կը կազմեն, Շրթունքներին սուս ու փուտ աչէն, յիշեալներ կը տեղան,

Կ'այլագունին դէմքերին սրտերակնուն յուզումէն, Ու մամոնան կը հնչէ մրցում փառքի ու ցոյցի, Հնչիւնն Շնորհի աղբիւրին մրտուցիւն մէջ կը ցանցի:

Բարեպաշտներ խուռներամ՝ յետին օրհնէնքն ընդունած, կը բռնեն բակ ու սանդուխ, դոներ ներքին, արտաքին Պակտոտ ու բիրտ կը նային մեկնողներուն նազազանց, Սպասածին կ'երեւի, քով քովի սեղմ կը մշտկին. Ու լարուած (ո՛ւր) կը ցրտին, կը հեռանան այն ստեն, Շրջազգեստի մ'երբ շրջիւնն դազրած, լաւ է արդէն:

Այս ի՛նչ ընտիր ժամանակ... այս ի՛նչ բարբեր անբասիր... Ու՛ դեռ լացով ազօթով սխալանքի գոհերուն, Այսպիսիներ կ'ուղղեն խեթ, կծու նայուածք ու զաղիր, նայուածք ժայթքող նախատիրք միայն իրենց յարմարուն Անոնց ցաւէն կը բերկրին. իրենց մեղքէն չեն սարսիր... Այս ի՛նչ ընտիր ժամանակ... այս ի՛նչ բարբեր անբասիր:

Տունն՝ ուր, խաչեր գաղաթին, կը բարձրանայ Գողգոթան, Ուր Յորդանան կը հոսի, Գեթսեմանին կը բուրէ, Ուր կը թռչտի անդադար Ազաւնին Սուրբ Վերնատան, Դրախտի սիւզեր յարուցած թեւերով լոյս-փետուրէ՛ Զէ՛, նման իսկ չէ այն տան ուրտեղ մտրակն Անմեղին, Շառաչից սուր ու հարթից հոն երկնի խորտ բորտ ուղին:

ՔԻՌՈՒՍՍՆ

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ՁԿՆՈՐԱԸ

Երբ Գառնիկ ներս մտաւ՝ ուղղակի գնաց եւ Մարիամը թեւերուն մէջ առնելով,

—Ներէ՛, սիրելիս, ներէ՛, հեծկտաց:

—Ո՛հ, յանցանքն իմն է, թոթովեց Մարիամ, ո՛ւր էր թէ մտանդն ալ ես ըլլայի:

Իրիկունը երկու ձկնորսներն ու անոնց կիները ուսելիք, կրակ եւ ճրագ պատրաստելէն ետքը տուներին գացին, վանդի իրենք ալ ունէին փոքրատի զաւակներ, որոնք այնքան օրերէ ի վեր զբաղինբուն խնամոց յանձնուած էին:

Մտեալին հայրն ու մայրը միմեկի մնալով աղօտ լոյսի մ'առջև, հեւանդ զաւակի մը քով սիրազոյն մտածմանց մէջ ընկզմեցան:

—Ո՛հ, կ'ըսէր Մարիամ մերթ ընդ մերթ, խեղճ սիրեցեալս, երբ կը մտածեմ թէ զուրք ճուրղն եւ անձրեւէն ստուած գնաց, խնդրիս կուգայ, մինչդեռ ես նոստաբուկ անկողնոյ մէջ երկնցած անուշ քուն կ'ըլլայի:

—Ո՛հ, մօր մը սիրտը, տաքուկ անկողին կը կռէ այն կէս մատ հաստութեամբ խշտակը՝ որուն վրայ երբ զաւակներուն քովէ քով երկնցած անմեղօրէն քնանալը կը տեսնէր, սիրտը կը խշտալ խորհելով թէ պապ

կ'առնեն: Բայց քանի որ ինք փողոյք, գետնի վրայ, սիղմի մէջ, անձրեւին տակ, ստանալունչ հովին ամեն սաստկութեանց ենթակայ ըլլալու տեղ ընդհակառակը եղած էր, խըշտակը՝ տաքուկ անկողին եւ հեւանդութեան ու սկարութեան յառաջ եկած թմրութիւնն ալ անուշ քուն կ'ըլլար:

—Ալ չսորթինք ատոր վրայ, սիրականս, կը պատասխանէր Գառնիկ, ձայնը ամուրցնելու ջանալով. հայցեմք Աստուծո՛ւն և աշխատինք որ ներսէն աղեկնայ: Արդէն ինձի համար քու կիսանքը հարեւր՝ զաւակ կ'արժէ:

—Ես ալ քեզի համար այդպէս կը խորհիմ, կ'ըսէր Մարիամ:

Եւ պահ մը ետքը,

—Փոնէ տէրտէքն աղէկ կարգա՞ց, շատ բազմութիւն կա՞ր, հարցուց:

—Ատ ի՛նչ ըսել է. հարկաւ աղեկ կարգաց եւ յիստունի չափ մարդեր ընկերակցեցան մինչև գերեզմանատուն:

Անբաղդ մարդը սուս խօսելու ստիպուած էր մայրական զգացումը չ'ըրաւորելու համար:

—Տէրտէքը պէտք էր որ մեզի գար այս իրիկուն, ըսաւ Մարիամ:

—Այո՛, բայց վերադարձնուս ոտքը քարի մը դարնուելով դարձած ըլլալուն պատճառաւ այս իրիկուն չ'պիտի կրնայ գալ, պատասխանեց ձկնորսը՝ չուրթիւրը խածնելով:

«Ո՛չ վաղը, ո՛չ միւս օր, եւ ո՛չ օր մը պիտի գայ» կրնար յաւելուլ Գառնիկ:

Արդարեւ ի՛նչ ընկու պիտի գար հիւղելի մը մէջ, ո՛ւր մարդավայել կերպով նստելու ամբողջ մ'անդամ չկար . . .

Թախիծն ու արտասուքը սա աղէկութիւնը ունին որ եթէ կերակուր ուտելու անոթակ չ'են ձգեր մարդուն վրայ, զէթ արոր ջրկերը թուլցնելով եւ ուղեղը յոգնեցնելով ակամայ քուն մը կը բերն, որու շնորհիւ տառապանները մի քիչ ժամանակ կ'անցընեն երկրէն զուրս: Եւ արդէն գիտենք որ ժամանակ անցնելով ամեն վիշտ կ'ամոքի:

Բնութեան սոյն պահանջին հպատակելով՝ զժրագորդ որդեկորոյսները խոր քունի մը մէջ ինկան քիչ ետք:

Պատմուած դէպքերէն երեք տարի ետքը Ապրիլ ամսոյ գեղածիծաղ առաւօտ մը խուռն բազմութիւն մը կը գիմեր դէպ ՚ի գերեզմանատուն:

Ս. Գէորգի տուն էր, օր յորում՝ ըստ սովորութեան քաղաքին՝ Հայ եւ Յոյն ամեն ոք կ'երթար իր ննջեցեալները այցելելու, մարդագետներուն վրայ նստելու, ուտելու խմելու, մինչդեռ մանկունք թաւալգլոր կը տապալկէին նորաբոյս խոտերու վրայ:

Փոքրիկ չիբիմի մը վրայ դեռ նոր դրուած տապանաքարի մը վրայ այր մ'ու կին մը նստած են. երկուքին ալ դէմքը սրտմախտուն երջանկութիւն կ'արտայայտէ, իրարու կը նային ժպտելով, սակայն իւրաքանչիւրին

# ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

**ԼՈՆՏՐՈՒ 26 Յուլիս.** — Բէքինի ընկի ազդեցութիւնը առաւել լուրջութեամբ համաձայն, Յուլիս 18 ին, գիտականները որչափ էին Զուռնի-Լի-Յամէնը՝ Կայսեր ներկայած է իրենց զիր մը, գիտականներն ընդ հակադրութեամբ Թիլէն-Չին զրկելու ։ Կայսերական զօրազնդերուն ու օտարականներուն միջև կոխակերպ գաղափար էին ։

**ԲԱՐԻՉ 26 Յուլիս.** — Տէրութիւնները կը շարունակեն իրենց բանակցութիւնները Ձիւնու մասին, Բէքինի վրայ խաղաղքը պիտի սկսի Օգ. 1 ին ։

Լորա Բոպէրէ հասած է Պալմորալ առանց ընդդիմութեան հանդիպելու ։

# ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐՆԵՐ

**ՄՈՒՐԱՎԻՅԷՑ.** — Գրաքովիայ լրագիրները քանի մը մանրամասնութիւններ կը պատմեն սուսական նախարար կոմս Մուրավիյէֆի յանկարծական մահուան վրայ ։

**Զարը,** նախարար Ռիդի ներկայութեան, սաստիկ կշտամբանք մը կուղղէ Մուրավիյէֆի, Ձիւնատանի ներկայիս ժողովութեանց առջև առնել չ'կրնալուն համար։ Ասոր վրայ կ'օճար կը քաշուի իր տունը։ Նոյն գիշերը կ'սպաննէ ինքզինքը, Ձարին ուղղեալ նամակ մը թողով, որուն մէջ կ'ազատէր որ Ձարը ձեռքէ չ'ձգէ քաղաքականութիւնը, որուն հետեւած էր ինք մինչև այն ատեն ։

**ՀԱՅԵՐԸ.** — Հայոց սոսակի թշնամին էնիս բաշա, Հալէպի կուսակալ կարգուեցաւ, հակառակ իր պաշտօնանկութեան Օտար հիւպատոսներն անմիջապէս Կ. Պոլսոյ տէրութեանց գիտականներուն իմացոյցին թէ քրիստոնէից համար այս անուանումը շատ վէշ հետեւանք ունի եւ մինչև իսկ երկիրը կ'ազգէ քրիստոնիայ բնակչութեան ։

**Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՅԵՐԸ.** — Մինչդեռ Եւրոպա զբաղեալ է Մայրաքոյն Արեւելքի մէջ, Թուրքիոյ խուլ բարկութիւնը դարձեալ եւ միշտ կը թափի Հայոց վրայ ։ Ամենաչնչին պատրուակ մը կը բաւէ կրկնելու նորէն առաջուան բարբարոսութեան տեսարանները ։ Թող անորձանակի հարուած մը պայթի, յայտնի չէ թէ ուսկից, կամ ինչու, բազմամտիս փողոցի մը մէջ, ինչպէս պատահեցաւ Յուլիս 19 ին, եւ ահա ոստիկաններու մարտիս մը կը թափի, կը վազվզեն ու կ'սպանան թալիւլու տունն ուսկից ատրճանակ պարպուեցաւ, իթէ այդ տունը Հայու մը վերաբերի ։ Առաջ, զգոճները կ'աժնիս թէ իրենց նեցուկը կերթային փնտռելու տեղացի կամ օտարական կեանքներուն քով ։ Հիմա, յեղափոխական ցոյցերը զուտ իսլամական հանգամանք ունին։ Չեն ըսեր միայն, Թուրքիան՝ թուրքերուն, այլ կ'ըսեն Իսլամը՝ հաւատարմութեան, եւ հետզհետէ շնչառող այս համալսական շարժումը՝ ոչ միայն Մուսթամիլին եւ իր քաղաքականութեանը, այլ եւ աւելի կ'սպանայ օտար եւ քրիստոնէայ աշխարհին ։

**Կիսիի.** — Երկու Հայեր կոխի ընտանեցան հոս, առաջնայն կողմը կոտորեցան, իսկ երկրորդին ճակատը

աչացը մէջ զլտորելու պատրաստ արտօսը մը կը նշմարուի ։ Թերեւս յօժարակամ պիտի թափէին մի քանի կաթիլ արցունք այն շիրմին վրայ, եթէ իրենցմէ քանի մը քայլ հեռու ութ տարեկան սիրուն տղեկ մը իր քովը գտնուող թօթօշիկ այտկով, կլոր կլոր թաթիկներով միամտայ դատրիկի մը հետ խաղալով հանդերձ իր աչքերը հօրն ու մօրը վրայ սեւեռած էր ըլլար ։

Այս տեսնելով երկու ամուսինք զիրար կը զսպէին։ Բազմութիւնը արգէն աստ եւ անդ տեղաւորուած էր երբ կարծրացած թիթով մարդ մը երեքուն քայլերով մօտեցաւ վերոյիշեալ փոքրիկ խումբին քով ։

—Օ՛, Պարոն Գառնիկ, թոթովեց մարդը, զո՛ւն ալ հոս ես ։

—Այո՛, Եանի, պատասխանեց ձկնորսը, մենք ալ ուղեցինք օգտուել այս սքանչելի օղէն ։

—Բայց ձեր բարեկամներէն շատ հեռու նստեր էք, նա՛, հոն՛ վարն են, ըսաւ Եանի որուն տարուան մը համար գինովնալու օրն էր ։

—Հոս աւելի աղէկ ենք, անանկ չ'է՞, Մարիամ, հարցուց Գառնիկ իր կնոջ գառնալով ։

Մարիամ գինեպանը ճանչնալով՝ սիրօք թունտ եւ լած էր, մէկ մանրերկրորդի մէջ աչքերուն առջև բերելով գինեմուրթեան պատճառաւ իր կրած տանջանքն ու թշուառութիւնը ։

—Ինչ հոս աղէկ եմ, եթէ կ'ուզես զու Վիրաս երթալ, պատասխանեց կնոջ կէս կծու ձայնով ։

—Ո՛հ, ըրաւ Գառնիկ, միթէ կրնամ՝ հետեւալ այս տեղէն, ուր երեք տարի առաջ . . .

վերաւորուեցաւ ։ Երկու կոտորարները հիւսնդանոց փոխադրուեցան ։

**ԱՅՐԱՆ.** — Խալիֆա թաղը, լուսաք ընող կնոջ մը հազուատները լանկեցան, կրնն անմիջապէս մեռաւ իր վէրքերէն ։

**ՆԱԽԱՐԵԿՈՒԹԻՒՆ.** — Եաֆայէ Բօր-Սայիտ եկող խաղաղարարձ նաւ մը, ամառոյս 22 ին ընկղմեցաւ Տամուէթի քով ։ Նաւազն ու իր պետը միայն ազատեցան ։

**ՍՊԱՆՆՈՒԹԻՒՆ.** — Ապու-Թիկի գիւղէն Մուհամէտ Հիւսէյին անուն անձ մը սպանուեցաւ, գիւղը նետուած էր նեղոսի մէջ, էլլաուաք գիւղին դիմացը ։

Ասոր ծնողքները մարդասպանութեամբ ամբաստանեցին երեք Ապու-Թիկի գիւղացիներ, որոնք ձերբակալուած են հիմա ։

**ԳՈՂ ՄԸ.** — Ֆէկկալայի թաղը, արար սպասաւոր մը տան մէջէն զոչոյցած է իր սիրով ըտլոր գոհարեղէններն ու կծիկը դրած . . . Ոստիկանութիւնն ետեւէն է ինկեր ։

**Բ. ԽՏՎԻԸ.** — Կ. Պոլսոյ լրագիրները կը ծանուցանեն որ Խոսիվական զբօսանաւը Մահրուսա, Օգոստ. 15ին Վոսիբոնէն պիտի մեկնի Թրիէսթ, ուր Ն. Բ. Խոսիվին արամադրութեանը տակ պիտի զրուի ։

**ԻՒԼԷՄԱՆԵՐԸ.** — «Թայմզ»-ի Կ. Պոլսոյ թղթակցը կը գրէ որ մահմետական կղերին ներկայացուցիչները բողոքած են ազգու կերպով Պալատին գէպի Ձինացիները ցոյց տուած համակրանքներուն դէմ ։ Այս բողոքը շուտով պիտի հաղորդուի եւրոպական տէրութեանց ։

**ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՄՊՈՆԸ.** — Կ. Պոլսէն Յուլիս 18ին գրած են որ սուսական գիտական բողոքած է ներքին Գործերու նախարարութեան, Պալատին Օրկան, «Մալիւմ»-ը ու «Ալթիլէթ» լրագիրներուն հրատարակած յօդուածներուն դէմ, որոնց մէջ իրաւունք արուած է օտարացի դէմ Ձինացիներուն ատելութեան ։ Գիտական մասնաւորացիս զգուշացուցած է նախարարը՝ Թուրքիոյ մէջ օտարա սեպց գրացման այդ գրգռուեցումներուն դէմ ։

**Բ. ԴՈՒՐ.** Բացարձակապէս անտարբեր կը գտնուի գիտականներուն բողոքներուն՝ էնիս բաշայի Հալէպի կուսակալ կարգուեցուն վերաբերմամբ ։

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ

### ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՈՑ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

Ընկերութեանս Ա. տարիչը վրանալու մօտ է, եւ միամտայ հաշուեկշիռն ու սեղեկագիրը պիտի պատրաստուի, ներկայուելու համար յառաջիկայ ընդհ. Ժողովոյ տարեկան գումարման, որ տեղի պիտի ունենայ Ազգ. Մանկապարտէզի Սրահը, Օգոստոս 26 ին կիրակի օրը ։ Եւ որովհետեւ միամտայ հաշուեկշիռ մը պէտք է պարունակէ ամբողջ մէկ տարուան գործառնութիւնները, հարկ անհրաժեշտ է որ հաշիւները փակուին մինչև Օգոստոս 1. թուական հիմնարկութեան Լսարան-Ընթերցատան ընկերութեան ։

Հետեւաբար Գործ. Ժողովս պարտք կ'զգայ պաշտօնագրէս հրատարակութեան տալ ընկերութեանս հիմ-

նօքը չ'մեցուց, ներսէն կոկորդն 'ի վեր լան մը կ'ելլէր, որմէ կը շեղձուր ։ Մարիամ՝ զլուխը անդին գարձուցած՝ աչքերը կը սրբէր ։ Տղեկը վազելով եկաւ եւ մօրը վեղը փաթուկով՝

—Ի՞նչ կայ, ի՞նչ եղար, կը զոչէր անոր երեսը շոյելով ։

—Հա՛, հասկցայ, կ'մկմայ Եանի, հոս այս քարին տակն է որ . . .

—Այո՛, այո՛, ըսաւ Գառնիկ փութալով ընդմիջել գինեպանը ։

—Հետս պիտի գամ ։

—Ո՛չ ։

—Ուրեմն մնաք բարով ։

Եանի հետացաւ ։

Գառնիկը՝ մօրը բազկաց մէջ տեսնելով իր մեծ եղբայրը, նախանձէն գրգռուելով զլտորելով եւ կրիայի արողութեամբ վազն 'ի վազ կու գար եւ մօրը ծունկերէն վեր մազելու կը ձգէր ։ Այս տեսնելով՝ Մարիամին արտօմութիւնը փարատեցաւ, եւ հայր ու մայր երջանկալի խնդում մ'ունեցան ։

Սակայն ներսէս խոկուն էր ։ Նա տարտամօրէն կը լիչէր թէ խաղընկեր մը կորսնցուցած էր, թաղին աւրդեկները իրեն ըսած էին որ գերեզմանատուն տարուած է, եւ հիմա որ ինք՝ ներսէս հոն կը գտնուէր կ'ուղէր՝ տղայոց յատուկ անտղութեամբ՝ հասկնալ, առանց փափաքը յայտնել ուղեւ. թէ ո՛ւր է այն զոր ձեռքէն առած էին ։ Այս անգամ, երբ ինք մօրը վեղը պլլուած կը կենար, լսած էր գինեպանն եւ գինով Եանիին խօսքի-

նական կանոնագրին 7րդ եւ ներքին կանոնագրին 14րդ յօդուածները ։

**ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆ.** Յօդ. 7. — Այն անգամ որ երեք ամիս շարունակ անվճար կը բողոյ իր բաժանորդութեան պատճը, Գործ. Ժողովոյ կողմէն կ'ենթարկուի ներքին կանոնագրի 14րդ յօդուածին ճամադրութեանը ։

**ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆ.** Յօդ. 14. — Գործ. Ժողովոյ վերջին պատճովան ազդարարութեան յետոյ դարձեալ իր պատճը չ'վճարող անգամ կը զրկուի Ընդհ. Ժողովոյ անդամակցութենէն ։

Հիմնուելով Ընկերութեանս Ընդհ. Ժողովոյ բացարձակ հաւանութեամբ վաւերացեալ հիմնական եւ ներքին կանոնագրիներուն վերոյիշեալ 2 յօդուածներուն ոգոյն վրայ, այն վերջին պաշտօնական ազդարարութեամբ կը հրաւիրենք ուշադրութիւնը բոլոր այն պատրիկներուն որոնք իրենց պարտքը ցարդ թերավճար թողած են կամ բնաւ չ'են վճարած ։ Առ այս Գործադիր Ժողովն պայմանաժամ որոշած է մինչև յառաջիկայ Օգոստոս 12 ։ Մինչև այդ որոշուած թուականը կը խնդրուի պատ. անդամներէն որ հաճին ամբողջացնել իրենց վճարումները, գիմելով ՆՈՐ ՕՐի խմբագրատունը որ է Ընկերութեանս կեդրոնատեղին, Պալատ Մուրուրի մէջ, թիւ 38 գրասենեակը, հակառակ պարագային, Գործ. Ժողովոյս կողմէն անդամակցութենէ զրկուած կը յայտարարուին անոնք, ըլլան նոյն իսկ Մայր Դիւանի կամ Գործ. Ժողովոյ անդամներ ։

## ԶԻՆԱԿԱՆ ՏՕՆԵՐ ՈՒ ԲԱՐՔԵՐ

Այս պահուս որ պայթած է Մայրաքոյն Արեւելքի խնդիրը, կ'արժէ ընթերցողները ծանօթացնել Ձիւնատանի երկրին մէջ մըջիւնի պէս գիտացող ժողովուրդներու բարքերուն ու ատեններուն ։

Չ'կայ երկրագործիս վրայ ազգ մը, որ սակաւթիւ տոներ ունենայ, որչափ Ձինացիները Ընդհանուր ցընծութեան միակ թուական մ'ունին, այն է Ամանորը, այդ օրը բովանդակ երկնային Կայսրութիւնը խնդամութեան սարսուէն բռնուած է ։

Ձինական տարին՝ լուսնային դրութեան վրայ հաստատուած, 12 ամիսներու բաժնուած է, բայց օրերուն հաշիւը բնաւ ձիւջ արդիւնք մը չ'տար, այնպէս որ Ձինացիները կը հարկադրուին այդ պակասը լրացնել կարգ մը տօներ աւելցնելով ամսվերջին, եւ 19 ամիս անգամ մը 13րդ ամիս մ'ալ հաշուելով ։ (1)

Երբ լուսնի նորիլը մօտենայ, ու երբ արեւը Ձրոնսին 15րդ աստիճանին հասնի, բոլոր պաշտօնատուներ 10 օր առաջ կը փակուին, ու Մաքսարիմ (Նախարարները) իրենց կնիքները կը պահեն մինչև առաջին լուսնի 20րդ օրը ։

(1) Կը զիտուի որ Ձինական տարին իր բաժանումներով նմանութիւն շատ ունի մեր տոմարական տարիին հետ, որ ինչպէս յայտնի է, հաւասարապէս 30 օրերէ բաղկացեալ 12 ամիսներէ կը բաժնուի, եւ կը պարունակէ 13րդ մաս մ'ալ 5—6 օր, Աւելեաց անունով։ Այս վերջինը մեծ գիւրութիւն կրնայ ընծայել մանաւանդ վաճառականներուն, իրենց ակախ հաշիւներն այդ աւելորդ օրերուն մէջ կարգադրելու ։

ըր, զոր հայրը շտապած էր ընդմիջել ։ Կը խորհէր հիմայ, եւ իր փոքրիկ գլուխը կը տանջէր՝ աչքերը տապանաբար լրայ յառած, զոր Եանի ցոյց տուած էր իր խօսակցութեան միջոցին ։

—Ի՞նչ կը մտածես, տղաս, հարցուց Գառնիկ ։

—Հոս, այս քարին տակն է, այնպէս չ'է՞, հարցուց ներսէս խօսքը մօրն ուղղելով ։

—Այո՛, սիրունս, պատասխանեց մայրը՝ արտմացած, համբուրէ՛ այդ քարը, հոգի՛ս ։

Ներսէս հնազանդեցաւ, եւ երբ գլուխը վերցուց աչքերը լեցած էին ։

—Ալ չ'պիտի՞ գայ, մայրի՛կ, հարցուց թաց ձայնով մը ։

—Ահ արդէն եկած է, տղաս, պատասխանեց Գառնիկ, ցուցնելով դատրիկը, որ տիրացած էր մօրը ստեանց ։

—Հայկուհի՛ն, ըրաւ ներսէս դարմանքէն աչքերը բանալով ։

—Այո՛ ։

—Ա՛, ուրեմն պղտիկցեր է, ըսաւ աղեկը ։

—Գարձեալ կը մեծնայ, պատասխանեց Մարիամ ։ Եւ ամենքը սկսան խնդալ. Հայկուհին ծիծր ձգեց եւ թաթիկներովը ծափահարեց ։

Գառնիկ այն բազմաղէտ օրէն 'ի վեր գինետուն ոտք կոխած չ'էր, այս մասին իր օղի ընկերներուն նորանոր ջանքերը ապարդիւն մնային ։

Երբ Մարիամ ու ներսէս ապարդիւնեցան, ինք սկսաւ ձկնորսութեան երթալ ընկերներուն մակոյկներով ։ Չու-

Սոյն ստեղծմանակէս զազարն երբեմն անկարգութեանց տեղի կուտայ, եւ մասնա որներ, առիթէն օգտուելով՝ իրենց շահերուն ու քիւրքին համեմատ կը ջանան կարգադրել ամեն գործերը: Այդ միջոցին, հարուստ ու ազգաստ ամեն զբաղում կը թողուն, ու միայն մեծահասակներն ու զրօտախոյրերը կը յաճախեն, կեր ու խումբ տալով իրենք զիրենք: Տարուան վերջին օրն ամեն ոք արթննալ կը հսկէ մինչեւ կէս գիշեր (իսկ երբեք առաւել յետոյ օրերը կը հսկեն մինչեւ կէս գիշեր) որ աստեղ կ'սկսին հրթիռ ու հրախաղութիւն յետոյ ատուան զէմ իրենց տան մէջ պատրաստութիւնները կ'ընեն յաջորդ օրուան հանդիսին համար, եւ աստուան կանուխ ամբողջ կը դիմէ զուսուզուելու աղօթատեղիները:

Այդ ստեղծութիւնը կը կոչեն Սուր-ճիւղ, զոր կը տօնեն քաղաքին չորս կողմը չորս մեծահասակներու մէջ, որոնց շուրջն այս ատօմը կը կառուցանեն հնդկեղեղէ (պամպու) մեծալայն թատերասրահներ, ուր խաղեր կը ներկայացուին ի պատիւ նոյն մեծահասակ շատուածին:

Տները նորէն կը կանոն օրին ու անցիկը իրենց գեղեցկագոյն հարուստներով կը զարդարուին: Այս վերջին սովորութիւնը պարտաւորիչ է, որովհետեւ Չինացի մ'իւնքիւնք ու խառն աղբաւ դասանած կըլլայ, եթէ տարեկան չբերքէն է՝ հարուստ հետեւաբար ամեն ջանք կ'ընէ ըստ կարի պահելու համար այդ անսպասելի սովորութիւնը, մինչեւ իսկ գողնալով երբեմն, եթէ է՝ կրնայ գնել:

Ըստ չինական օրինաց, Ամանորի հանդէսները պէտք է տեսնել 3 օր, իսկ ժողովուրդը յաճախ կրկնապատիկ սեւողութեամբ կը տօնէ:

Ա. օրը կը կոչուի Քալ-ճաղ (օր թոշնոց), որ հաստատուած է յիշեցնելու համար թէ թեւաւորք ալ մարգոյս անուսնեղներն մին են: Կը հրաժարին միս ուտելէ եւ ջերմ հաւատացեալք խիստ ծով կը պահեն:

Բ. օրն է Քու-ճաղ (օր շանց): Չինացիք այնչափ կը յարգեն շաներն, որ ասոնց համար մասնաւորապէս դազազ շինող գործարարներ ունին. այնպէս կը հաւատան թէ՛ իրենց խնամանոց մին կրցած է մահուանէ զերծիլ շորհիւ միշտ, որ պատասխանով յափեր է մարգասպանը, եւ սակայն, մի տարօրինակ հակադրութեամբ, Չինացիք շան միս կ'ուտեն:

Գ. օրն է Չեւ-ճաղ (օր խոզաց): Չինացիք կը մեծարեն յիշատակն այս կենդանեաց միտն, որ, ըստ անսպասելի է, նուրբական թանկագին ձեռագիր Վազատեր է հրեշտէն: Այն օրը խոզի միս չեն ուտեր:

Դ. օրն է Սաու-ճաղ (օր ոչխարաց): Այն օրն նուրբալ է ի յիշատակ Բու-ճիւն-Վանկայի, հովիւ մը որ խեղճութեամբ ապրած է, բանջարեղիւնք միայն մասնակով եւ ծառոց կեցելն իրը զգեստ գործածելով. եւ սակայն ոչխարաց բրդէն կարելի եղած օգուտը քաղելու բոլոր միջոցները նը արվեցուցած է իւր ազգին:

Ե. օրն է Նիւ-ճաղ (օր կովուց), այս կենդանեաց մին իւր կաթով անուցիւր է մասնակ մը, որոյ ծնողն կորած էին, եւ որ յետոյ մահաբիւն լինելով, այն կովուսն ի պատիւ մեծահասակ տուած է: Այս պատճառաւ շաղու միայնք բոլորովին կը խորշին կովու միս ուտելէ. ուստի ալ քառասուն տարեկանէն վերջ կը հրաժարին անտի, սպա թէ ոչ իրենց իրկութիւնն անյուսակի կը կարծեն:

Զ. օր է Նա-ճաղ (օր ձիոց). այս սոնն հաստատուած է ժողովրդեան զգալնելու համար որ զիտնայ յարգել այդ օգտակար չորս օրոտանիներն:

Իսկ մարդ էակին նուրբալ է է. օրն երեւ-ճաղ: Այս սուր ատօմին ստուուածն է Բօֆ-Չօ, որ Չինացեաց ուսոյց լինիւով, զորեւով եւ միտով սնանիլ: Բօն-Չօ է նաեւ զիւրազն Բ. աւուր, որ կը կոչուի Քօ-ճաղ (օր արմտեաց) զի նա տալիսն եղած է սովորեցնող հունտերու օգտակարապէս կիրառութիւնն ու անդարարութիւնը: Սա կը նախագահէ նաեւ Թ. աւուր՝ Նօ-ճաղ (օր կտաւի), որովհետեւ մարդոց արվեցուց վուշը մանկու եւ զայն գործելու արհեստն:

Վերջապէս Ժ. օրն նուրբալ է առ Գերադոյն էակին: Այցեւորութի գործածութիւնն ի Չինաստան անյիշատակ ժամանակներէ հետէ ծանօթ է: Չինացիք եւս Ամանորի ատօմը յայց կ'ենեն եւ ընծաներ կուտան միմեանց, եւ փոխադարձ շնորհաբարութեանց մեծ տոմար կը զրկեն, անց ներկայացնելով երեք զիւրաւոր եւ րանութիւններ, զոր. ըստ իւրեանց, մարդիկ կարող են վայելիլ երկրիս վրայ. այսինքն՝ 1. Ամուսնութիւն, 2. Ժողովրդային պաշտօն մը (կամ յատկաբարութիւն) եւ 3. Երկար կեանք: Սոյն երեք բարեմաղթութիւնները կը ցուցնեն՝ մանկան, մահաբիւնի եւ ծերունոյ մը պատկերօք, վերջոյն քով արագիլ մ'եւս նկարուած է իւր խորհրդանշան երկայնակեցութեան:

Այս սովորը տպագրեալ են կարծազոյն չինական թղթի վրայ, հետեւալ կամ հոմանիչ վերնագրով մը. «Երջանկութիւնը ծաղկեալ լինի», որոյ կողմակի զբուած է. «Աս (աստ կը դուրսի իրկողին պատուակալ անուր), մինչեւ գետին կ'ողջունեմ գձեղ. կեցիք յաւ էտ»:

**ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ**

**ՏԻԳՐԱՆ Ն. Թ. ՍԱՒԱԼԱՆ**

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

Ա. Գարբիւնեան տպարանէն մարտի տպագրութեամբ եւ հեղինակին վիճակը պատկերով զարդարուած՝ ի լոյս կոչելու մօտ է հարիւր աւելի էջերէ բաղկացեալ սոյն կենսագրական երկն որ իւր շահեկան պարտեւակութեամբ արժանի է ամեն կարգի ազգայնոց ընթերցման: Ինքնակենսագիրը, Չինացիոյ հին ծանօթ գրական զէմբրէն մին, իւր Երուսաղէմ, Աղեքսանդրիա, Իզմիր եւ Էսթեմիշ վարած ուսուցչական եւ այլ կարեւոր պաշտօններու ընթացքը՝ ազգային եւ օտարազգի եկեղեցական եւ աշխարհական նշանաւոր անձնաւորութեանց հետ ունեցած է զրուար եւ մտերմական յարաբերութիւններ, զորս զիտցած է ճարտար եղանակաւ մը խառնել իր կենսագրական յուշերուն, այնպէս որ ամբողջ գործն մէկ շունչով կարելի է կարգալ անձանւորութիւնը եւ լարուած հետաքրքրութեամբ:

Որովհետեւ սակաւաթիւ օրինակներ միայն տպուած են սոյն կենսագրական երկէ, փոխադրող կրնան այժմէն ընել իրենց յանձնարարութիւնն՝ զիմեով:

Ս. ԳԱՐԲԻՆԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԸ

Ի Պապար Մուրուր Թիւ 27

Գին 5 ԴԱՀ. ՈՂՁ

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ-ԿՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԵԻ**

Հաստատուել 1 յունվար 1897

Հիմնադիր-Յօրէի

**Ս. ԲԻՆՐԱՏ**

Սոյն հաստատութիւնը փոխադրուած է այժմ Ապոն, եւ Յուլիս 15 սկսեալ՝ կ'ընդունի միայն գիշերօթիկ աշակերտներ, 13 տարին լրացուցած եւ գէթ նախնական կրթութիւնն ստացած:

Կ'աւանդուի հայերէն, ֆրանսերէն, եւ անգլիերէն. նաեւ, աւելարական աշխարհագրութիւնն ու տօմարակալութիւն, գործնական մէթոտով:

Ընդունելութեան պայմաններուն եւ ուրիշ մանրամասնութեանց տեղեկանալու համար գիւմել կրթարանի Տեսչութեան, ՆՈՐ ՕՐ ի իմբադրատունը, Պապար Մուրուրի մէջ, թիւ 38 գրասենեակը, ուր Տնօրէնը կը գտնուի, բաց ի կիրակիէ, ամեն օր կէս օրէ ետքը ժամը 3էն մինչեւ 6:

Le gérant, J. MUNIER.

**ԿՈՒՋԷ՛Ք ՈՒՆԵՆԱՎ ՈՍԱՒԻ**

ԿՈՒՋԷՆ ԿԱՐԻՈՂ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

**ԺԱՄԱՑՈՅՑ ՍԸ**

ՄԻՄԻԱՅՆ 120 ԴՐՇ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԴԻՄԵՑԷՔ

**ՄԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ**

ԳՈՂԻՐԷ ՄՈՒՍԻԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաեւ ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենազիւրաւատչելի գներէն սկսելով մինչեւ ազամանդազարդ: Արժաթ ժամացոյցներ 50 դրուշէն սկսեալ նիքէլ որմենթուտ ժամացոյցներ 22 դրուշէն սկսեալ. նաեւ Ոսկի, արժաթ եւ ոսկեպատ շքեթաներ եւ գոհարեղէններ, ինչպէս նաեւ պատի եւ քօնաչի բազմազան բանախիւններ:

Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 Դրուշի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ընեն:

Ուրեմն զիմեցէ՛ք ուղղակի:

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

**ԱՏԱՆԱՐՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՈՍ**

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահիէ ար ըս Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գաստիկոնը: Կը բժշկէ բերնի եւ սկուաչի ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազգասները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

**ԶՈՒԼԻՉ - ՄԵՔԵՆԱԳՈՐԾ**

**ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՍԱՐԳԻՍԵԱՆ**

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

Շուրա Մուհամմէտ Ալի, Հապպակիի

Կը ձուլնալ կը շինեն երկաթէ ու արոյրէ զանազան գործիներ ոսկերչութեան եւ ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, կէն: Յաճախողները գահագուստող պայմաններով:

**ԱՒԱՆԴԱՍԱՐ (ԷՄԱՆԷԹՃ)**

**ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ**

ՇԱՐԷՒ ՄՕՀԱՄՄԷՏ ԱԼԻ, ՊՍՊ ԷԼ ԽԱԼԻ, ԳՈՂԻՐԷ

Կ. Պալոյ մուսուլմանաւոր խանութի թիւ 84

Կը յայտարարէ արգոյ հասարակութեան թէ՛ Կ. Պալոյ Պաղէ Գարու, Թաշխանի թիւ 26 վաճառատունը բնակող եւ երկար ժամանակէ ի վեր իր փորձառութեամբ եւ ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախորդաց վստահութիւնը զբաւոյ եմանեթճի Աբրահամ ԷՖ. Պալթայեանի հետ ընկերակցութիւն մը կազմած է: Այսուհետեւ Կ. Պալոյն Եգիպտոս եւ Եգիպտոսէն Կ. Պալոս զրկուելիք ամեն տեսակ աւանդներ անկորուստ ու սպասով պիտի յանձնուին սահմանեալ տեղերին:

**ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ**

ՈՒՐՐԱԹ 27 ՅՈՒԼԻՍ 1900

|      |      |      |      |      |      |
|------|------|------|------|------|------|
| 7568 | 8333 | 1703 | 3495 | 5360 | 687  |
| 958  | 1133 | 1436 | 2297 | 2649 | 2878 |
| 3969 | 6624 | 6413 | 6582 | 6171 | 7140 |
| 7266 | 7453 | 7683 | 8401 | 8940 | 9341 |
|      |      |      | 9475 | 9819 | 9854 |

Տպագրութիւն Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ — Պապար Մուրուր

կը ծախուելուն եւ իր բաժինը տանելուն պէս ուղղակի տուն կը վազէր: Այս կերպով գէթ օրական հարց ապահովեալ էր:

Բայց բուրբոյն անհիմն կարծելու է՛ք սա առածը. «Դու քեզ օգնէ՛, Աստուած ալ քեզ պիտի օգնէ»:

Գործէ քաջուած մարգասէր մը Գառնիկին անպարսակելի ընթացքը տեսնելով, եւ նորա խղճալի կացութեան տեղեկանալով, անոր տուաւ ինչ որ պէտք էր մակոյկ մը եւ գործիք գնելու համար: Այնուհետեւ երիտասարդը ինքն իր հաշուոյն աշխատեցաւ եւ՝ խնայասիրութեամբ՝ տարի մը վերջը այն բարեխէրին զրամ մը հասուցանելէն ետքը անիկն ալ քիչ շատ յարգարեց:

Հիմա իր նախկին երջանկութեան ժամանակ բնակած տունը վարձած է դարձեալ. ծովէն վերադարձին պատահանէն զուրբը հակած կը տեսնէ սիրեցեալներուն զլուխները. եւ տուն մտնելով ինքզինքը միշտ կը գտնէ զուարթ ու ժպտուն զէմբրով չըլկապտեալ: Նա այլ եւս զտարիկին լայուն պատճառը չհարցնեց, եւ Մարիամ ամեն բանի խորը թափանցելու չձգեցիր:

Ներսէս արձրեւոտ գիշերներէն մի քիչ կը ստակայ, բայց ծնողները սպասով են որ տարիքն առնելով այդ ալ պիտի անցնի:

ՎԵՐՁ: